ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Տեղեկատվական անվտանգության ապահովման ոլորտում Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպության անդամ պետությունների համագործակցության մասին

Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպության անդամ պետությունները, այսուհետ՝ Կողմեր,

ղեկավարվելով 1992 թվականի մայիսի 15-ի՝ Հավաքական անվտանգության մասին պայմանագրի, 2002 թվականի հոկտեմբերի 7-ի՝ Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպության կանոնադրության, Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպության՝ մինչև 2025 թվականի հավաքական անվտանգության ռազմավարության դրույթներով՝ հաստատված ՀԱՊԿ Հավաքական անվտանգության խորհրդի 2016 թ. հոկտեմբերի 14-ի որոշմամբ, ՀԱՊԿ Հավաքական անվտանգության խորհրդի այլ որոշումներով՝ ուղղված տեղեկատվական անվտանգության համակարգերի կատարելագործման և համակարգված տեղեկատվական քաղաքականության հիմքերի միավորման ջանքերին՝ Կողմերի շահերից ելնելով,

մտահոգված լինելով տեղեկատվական տարածքում աճող սպառնալիքներով, որոնք ընդունակ են վնաս հասցնելու ՀԱՊԿ անդամ պետությունների ազգային և հավաքական անվտանգությանը,

ղեկավարվելով միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքներով՝ խաղաղության, միջազգային և տարածաշրջանային անվտանգության ու կայունության պահպանման նպատակով,

համարելով, որ տեղեկատվական անվտանգության ապահովումը ՀԱՊԿ անդամ պետությունների հավաքական անվտանգության ապահովման գերակա ուղղություններից մեկն է,

անընդունելի համարելով քայքայիչ տեղեկատվական ազդեցությունը տեղեկատվական ենթակառուցվածքների օգտագործմամբ, տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործումը՝ ներքին գործերին միջամտելու, տեղեկատվական անվտանգության սպառնալիքներ սադրելու համար,

ձգտելով կանխել Կողմերի տարածքներում իրավիճակի ապակայունացման,

ծայրահեղ կարևոր կառուցվածքներին վնաս հասցնելու նպատակով տեղեկատվական տեխնոլոգիաների և ռեսուրսների օգտագործումը,

ընդունելով, որ տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների օգտագործման մեջ վստահությունն ու անվտանգությունը տեղեկատվական հասարակության հիմնարար սկզբունքներից են,

ձգտելով ամրապնդել Կողմերի համագործակցության իրավական և կազմակերպչական հիմքերը տեղեկատվական անվտանգության ապահովման ոլորտում,

անհրաժեշտ համարելով տեղեկատվական անվտանգության համակարգի կատարելագործմանն ուղղված համատեղ գործնական միջոցառումների հետագա իրականացման համար պայմանների ստեղծումը,

աջակցելով տեղեկատվական անվտանգության մշակույթի ձևավորմանը՝ հիմնված մարդու իրավունքների և ազատությունների, քաղաքական, սոցիալական և տնտեսական կայունության վրա,

առաջնորդվելով ՀԱՊԿ անդամ պետությունների պետական ինքնիշխանության առաջնահերթության սկզբունքներով,

ընդգծելով, որ Կողմերից յուրաքանչյուրի տեղեկատվական անվտանգությունը ձևավորում է ՀԱՊԿ տեղեկատվական անվտանգությունը և անմիջականորեն ազդում է ՀԱՊԿ հավաքական անվտանգության վրա ընդհանուր առմամբ,

ընդունելով հիմնական իրավունքների ու ազատությունների և տեղեկատվական անվտանգության սպառնալիքներին արդյունավետ հակազդման միջև հավասարակշռություն պահպանելու անհրաժեշտությունը,

ձգտելով ապահովել Կողմերի շահերի պաշտպանվածությունը տեղեկատվական տարածքում,

համաձայնեցին ներքոնշյալի մասին.

Հոդված 1

Սույն Համաձայնագրի նպատակն է Կողմերի փոխգործակցության զարգացումը՝ ՀԱՊԿ անդամ պետությունների տեղեկատվական անվտանգության

ապահովման շահերից ելնելով:

Համաձայնագրի նպատակին հասնելու համար Կողմերն ապահովում են.

- ՀԱՊԿ անդամ պետությունների տեղեկատվական անվտանգության համակարգի հետագա զարգացումը՝ Կողմերի միջպետական համագործակցության և միջգերատեսչական փոխգործակցության ամրապնդման հիման վրա,

- տեղեկատվական ոլորտում սպառնալիքներին հակազդման մեխանիզմների կատարելագործումը,

- ՀԱՊԿ անդամ պետությունների տեղեկատվական տարածքում տեղեկատվական անվտանգության ամրապնդմանն ու անօրինական գործունեության հակազդմանն ուղղված համատեղ միջոցառումների անցկացումը,

- միջազգային տեղեկատվական անվտանգության ապահովման հարցերում համագործակցությունը,

- համաձայնեցված դիրքորոշման մշակումը միջազգային տեղեկատվական անվտանգության ապահովման հարցերով և միջազգային մակարդակում դրանք առաջ տանելը,

- ՄԱԿ-ի հովանու ներքո տեղեկատվական տարածքում պետությունների պատասխանատու վարքագծի նորմերի ու սկզբունքների, համընդհանուր կանոնների մշակմանն ու շուտափույթ ընդունմանն աջակցությունը,

- փոխադարձ օգնություն՝ Կողմերի տեղեկատվական անվտանգության ապահովման տեխնոլոգիական հիմքի զարգացման նպատակով:

Հոդված 2

Սույն Համաձայնագրի նպատակների համար օգտագործվում են հետևյալ եզրույթներն ու սահմանումները.

«քայքայիչ տեղեկատվական ազդեցություն»՝ ՀԱՊԿ անդամ պետությունների դեմ տեղեկատվական-հեռահաղորդակցական տեխնոլոգիաների օգտագործում՝ իշխանության մարմինների գործունեության խաթարման, ազգային անվտանգության թուլացման, տեղեկատվական-հեռահաղորդակցական համակարգերին, ցանցերին և ռեսուրսներին, հույժ կարևոր և այլ կառուցվածքներին վնաս հասցնելու, ռազմական, ավանդական հոգևոր և բարոյական արժեքների ոչնչացման, ազգային

տեղեկատվական ռեսուրսների նկատմամբ հսկողության հաստատման, ՀԱՊԿ անդամ պետությունների ազգային շահերին վնաս հասցնելու նպատակով,

«տեղեկատվության պաշտպանության»՝ իրավական, կազմակերպական և տեխնիկական միջոցառումների համալիր՝ ուղղված տեղեկատվության ամբողջականության, գաղտնիության և մատչելիության ապահովմանը,

«տեղեկատվական անվտանգություն»՝ տեղեկատվական տարածքում անձի, հասարակության, պետության և նրանց շահերը սպառնալիքներից, քայքայիչ և այլ բացասական ազդեցություններից և սպառնալիքներից պաշտպանվածության վիճակ,

«տեղեկատվական տարածք»՝ տեղեկատվական ենթակառուցվածքի և իր կողմից մշակվող տեղեկատվության ամբողջություն,

«համակարգչային հարձակում»՝ ծրագրային տեխնիկական միջոցներով տեղեկատվական համակարգերի և տեղեկատվական-հեռահաղորդակցական համակարգերի, ցանցերի, միջոցների, այդ թվում՝ հույժ կարևոր կառուցվածքների կառավարման ավտոմատացված համակարգերի վրա նպատակասլաց ազդեցություն, որն իրագործվում է դրանց գործողության խափանման և/կամ դադարեցման կամ իրենց կողմից մշակվող տեղեկատվության անվտանգության սպառնալիքի ստեղծման նպատակով,

«համակարգչային միջադեպ»՝ տեղեկատվական ենթակառուցվածքի տարրի կամ ընդհանուր տեղեկատվական ենթակառուցվածքի գործունեության նորմալ ռեժիմի խափանման փաստ,

«հույժ կարևոր կառուցվածքներ»՝ պետության օբյեկտներ, համակարգեր և ինստիտուտներ, որոնց վրա ազդեցությունը կարող է ունենալ ազգային անվտանգության վրա ուղղակիորեն ազդող հետևանքներ, ներառյալ անձի, հասարակության և պետության անվտանգությունը,

«տեղեկատվական անվտանգության համակարգ»՝ իրավական, քաղաքական, ռազմական, կազմակերպչական, կադրային, ֆինանսական, գիտատեխնիկական և հատուկ բնույթի միջոցների համալիր՝ ուղղված տեղեկատվական անվտանգության ապահովմանը,

«տեղեկատվական անվտանգության սպառնալիք»՝ տեղեկատվական տարածքում անձի, հասարակության, պետության և նրանց շահերի համար վտանգ

ստեղծող գործոն (գործոնների ամբողջություն):

Հոդված 3

Որպես տեղեկատվական անվտանգության հիմնական սպառնալիքներ՝ Կողմերը դիտարկում են.

ՀԱՊԿ անդամ պետությունների և Կազմակերպության նկատմամբ՝ ընդհանուր առմամբ, քայքայիչ տեղեկատվական ներգործությունը,

հանցավոր խմբերի (խմբավորումների) կազմակերպված ահաբեկչական և ծայրահեղական կազմակերպությունների կողմից տեղեկատվական-հեռահաղորդակցական տեխնոլոգիաների օգտագործումը,

հակաօրինական գործունեության իրականացումը տեղեկատվական-հեռահաղորդակցման տեխնոլոգիաների օգտագործմամբ:

Հոդված 4

Կողմերը տեղեկատվական անվտանգության ապահովման ոլորտում իրականացնում են համագործակցություն հետևյալ հիմնական ուղղություններով.

Փոխգործակցություն՝ համագործակցության իրավական հիմքերի մշակման և առաջխաղացման, միջազգային իրավական բազայի կատարելագործմանն աջակցման գործում,

տեղեկատվական անվտանգության սպառնալիքի դեմ համատեղ արձագանքման գործնական մեխանիզմների ձևավորում,

վստահության միջոցների ամրապնդում տեղեկատվական անվտանգության ապահովման բնագավառում,

տեղեկատվական անվտանգության ապահովման տեխնոլոգիական հիմքի կատարելագործում,

սույն Համաձայնագրի իրականացման նպատակով Կողմերի իրավասու մարմինների փոխգործակցության համար պայմանների ստեղծում:

Հոդված 5

Կողմերը տեղեկատվական անվտանգության ապահովման ոլորտում գործադրում են միասնական ջանքեր՝ համագործակցության իրավական հիմքերի ձևավորման և միջազգային իրավական բազայի կատարելագործման համար.

մշակում են միջազգային պայմանագրերի և այլ փաստաթղթերի նախագծեր սույն Համաձայնագրի իրականացման համար,

բարելավում են Կողմերի ազգային նորմատիվ իրավական բազան տեղեկատվական անվտանգության ապահովման ոլորտում,

մշակում են առաջարկություններ՝ ուղղված տեղեկատվական անվտանգությունը կարգավորող՝ Կողմերի ազգային օրենսդրությունների ներդաշնակեցմանը,

կատարելագործում են տեղեկատվական անվտանգության ոլորտում իրավախախտումների համար նախատեսված պատասխանատվությունը կարգավորող նորմերը,

կատարելագործում են տեղեկատվական ոլորտում անօրինական գործունեությանը հակազդելու իրավական միջոցները:

Հոդված 6

Կողմերն աջակցում են տեղեկատվական անվտանգությանը սպառնացող վտանգներին համատեղ արձագանքման գործնական մեխանիզմների ձևավորմանը.

համատեղ ջանքեր են գործադրում տեղեկատվական անվտանգությանը սպառնացող վտանգների հայտնաբերման և չեզոքացման, հետևանքների վերացման համար,

ապահովում են տեղեկատվական անվտանգության ապահովմանն ուղղված՝ համակարգված միջոցառումների պլանավորումն ու իրականացումը,

անհրաժեշտության դեպքում, համագործակցում են հույժ կարևոր կառույցների պաշտպանության հարցերում,

համագործակցում են քայքայիչ տեղեկատվական ներգործությանը հակազդելու գործում,

հակազդում են տեղեկատվական տարածքում իրականացվող անօրինական

գործունեությանը,

ինքնուրույն կամ համապատասխան դիմումի դեպքում իրականացնում են միջոցառումներ՝ կանխելու երրորդ կողմի կողմից տարածքը և (կամ) ՀԱՊԿ անդամ պետության իրավասության տակ գտնվող տեղեկատվական ենթակառույցների օգտագործումը, ՀԱՊԿ այլ անդամ պետության վրա քայքայիչ տեղեկատվական ազդեցություն, այդ թվում համակարգչային հարձակումներ իրականացնելու համար,

փոխգործակցում են՝ իրենց տարածքի օգտագործմամբ համակարգչային հարձակումների աղբյուրը որոշելու, այդ հարձակումներին հակազդելու և հետևանքները վերացնելու նպատակով,

հակազդում են վնասարար ծրագրային ապահովման ստեղծմանն ու տարածմանը,

փորձի փոխանակում են իրականացնում հակաօրինական նպատակներով օգտագործվող տեղեկատվական աղբյուրների որոշման չափանիշների մշակման, դրանց հայտնաբերման և արգելափակման հարցերում,

փոխգործակցում են տեղեկատվական անվտանգության ապահովման ոլորտում կադրերի պատրաստման հարցերով:

Հոդված 7

Կողմերը, զարգացնելով տեղեկատվական անվտանգության ապահովման ոլորտում վստահության ամրապնդման միջոցառումները՝

ապահովում են տեղեկատվության փոխանակումը և փոխադարձ ազդարարումը տեղեկատվական անվտանգության սպառնալիքների և դրանց աղբյուրների, համակարգչային միջադեպերի, արձագանքման իրականացվող միջոցառումների, այդ թվում՝ հետևանքների վերացման մասին,

ազգային օրենսդրության համաձայն՝ տրամադրում են հայցվող տեղեկատվությունը, որն անհրաժեշտ է Համաձայնագրի գործողության ոլորտում ոչ իրավաչափ գործողությունների քննության համար,

փորձի փոխանակում են իրականացնում ոչ իրավաչափ գործողությունների կանխման, իրավական քննության, հետևանքների վերացման գործում՝ տեղեկատվական անվտանգության սպառնալիքների հակազդման, տեղեկատվական

տեխնոլոգիաների օգտագործմամբ,

նպաստում են տեղեկատվության փոխանակմանը՝ նշանների, փաստերի, մեթոդների և միջոցների ընդհանուր օգտագործման կապերի ցանցերի շահագործման վերաբերյալ ահաբեկչական և այլ անօրինական նպատակներով,

ազգային օրենսդրության համաձայն՝ տեղեկատվության անվտանգության ապահովման ոլորտում իրականացնում են գիտահետազոտական աշխատանքների արդյունքների, տեղեկատվական-վերլուծական և տեղեկատու նյութերի, նորմատիվ իրավական ակտերի փոխանակում,

խթանում են տեղեկատվական անվտանգության ապահովման ոլորտում գիտատեխնիկական մշակումները:

Հոդված 8

Կողմերը ձեռնարկում են համաձայնեցված միջոցառումներ՝ ուղղված տեղեկատվական անվտանգության ապահովման տեխնոլոգիական հիմքի կատարելագործմանը.

աջակցում են տեղեկատվական անվտանգությունն ապահովող՝ համատեղ, ինչպես նաև համատեղելի համակարգերի ձևավորմանը,

նպաստում են տեղեկատվական անվտանգության ապահովման նկատմամբ տեխնիկական պահանջների ներդաշնակեցմանը,

աջակցում են Կողմերին տեղեկատվական անվտանգության և արդիականացման ծրագրային և տեխնիկական միջոցներով ապահովման հարցերում:

Հոդված 9

Սույն Համաձայնագրի իրականացման նպատակով Կողմերի իրավասու մարմինների գործնական փոխգործակցությունը իրականացվում է ՀԱՊԿ շրջանակներում ընդունված միջազգային իրավական ակտերին համապատասխան:

Հոդված 10

Սույն Համաձայնագրի շրջանակներում Կողմերն ապահովում են համագործակցության ընթացքում փոխանցվող կամ ստեղծվող տեղեկատվության պաշտպանությունը, որի ամտչելիությունը և տարածելը սահմանափակված են

Կողմերի օրենսդրությունների համաձայն:

Այդպիսի տեղեկատվության պաշտպանությունն իրականացվում է Կողմերի օրենսդրության և (կամ) ստացող Կողմի նորմատիվ իրավական ակտերով սահմանված փոխադարձ պարտավորությունների համաձայն՝ ՀԱՊԿ-ում ընդունված այլ բազմակողմ համաձայնագրերի շրջանակներում.

Ստացված տեղեկատվությունը չի բացահայտվում, չի փոխանցվում երրորդ կողմի՝ առանց այդ տեղեկատվության աղբյուր հանդիսացող փոխանցող Կողմի գրավոր թույլտվության:

Սույն Համաձայնագրի իրականացման ընթացքում Կողմերի պետական գաղտնիք կազմող տեղեկությունների պաշտպանության պայմաններն ու միջոցները, փոխանակման կարգը որոշվում են 2004 թվականի հունիսի 18-ի՝ Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպության շրջանակներում գաղտնի տեղեկատվության պահպանության փոխադարձ ապահովման մասին համաձայնագրով:

Հոդված 11

Սույն Համաձայնագրի դրույթները չեն ազդում Կողմերից յուրաքանչյուրի՝ այլ միջազգային պայմանագրերից բխող իրավունքների և պարտականությունների վրա, որոնց մասնակից են նրանք հանդիսանում:

Հոդված 12

Սույն Համաձայնագիրը գործում է 1992 թվականի մայիսի 15-ի՝ Հավաքական անվտանգության մասին պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում, եթե Կողմերն այլ որոշում չեն ընդունում:

Հոդված 13

Կողմերի փոխադարձ համաձայնությամբ սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ, որոնք կկազմեն դրա անբաժանելի մասը, կձևակերպվեն առանձին արձանագրություններով և ուժի մեջ կմտնեն սույն Համաձայնագրի 16-րդ հոդվածով նախատեսված կարգով:

Հոդված 14

Սույն Համաձայնագրի մեկնաբանման և կիրառման հետ կապված վիճելի հարցերը լուծվում են Կողմերի միջև՝ խորհրդակցությունների և բանակցությունների միջոցով:

Նման խորհրդակցությունների և բանակցությունների ժամանակ Կողմերը շարունակում են կատարել իրենց պարտականությունները՝ սույն Համաձայնագրի դրույթներին համապատասխան:

Հոդված 15

Կողմերն ինքնուրույն են հոգում սույն Համաձայնագրի կատարմանն ուղղված համապատասխան միջոցառումներին իրենց ներկայացուցիչների և փորձագետների մասնակցության հետ կապված ծախսերը:

Սույն Համաձայնագրի կատարման հետ կապված այլ ծախսերի վերաբերյալ Կողմերը յուրաքանչյուր առանձին դեպքում կարող են համաձայնեցնել ֆինանսավորման այլ կարգ՝ իրենց օրենսդրություններին համապատասխան:

Հոդված 16

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում այն ստորագրած Կողմերի կողմից ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին չորրորդ գրավոր ծանուցումը ավանդապահի ստանալու օրվանից:

Անհրաժեշտ ներպետական ընթացակարգերն ավելի ուշ կատարած Կողմերի համար սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում համապատասխան գրավոր ծանուցումը ավանդապահին հանձնելու օրվանից:

Հոդված 17

Յուրաքանչյուր Կողմ կարող է դուրս գալ սույն Համաձայնագրից՝ այդ մասին գրավոր ծանուցում ուղարկելով ավանդապահին ոչ ուշ, քան դուրս գալուց 6 ամիս առաջ՝ կարգավորելով սույն Համաձայնագրի գործելու ընթացքում առաջացած բոլոր պարտավորությունները:

Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպության

գլխավոր քարտուղարը տեղեկացնում է Կողմերին Համաձայնագրից Կողմի դուրս գալու և այդ Կողմի համար դրա գործողության դադարեցման մասին:

Կատարված է Մինսկ քաղաքում 2017 թվականի նոյեմբերի 30-ին, մեկ բնօրինակով՝ ռուսերենով: Սույն Համաձայնագրի բնօրինակը պահվում է Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպության քարտուղարությունում, որը դրա հաստատված պատճենը կուղարկի սույն Համաձայնագիրն ստորագրած յուրաքանչյուր պետության:

Հայաստանի Հանրապետության կողմից՝
/ստորագրություն/

Ղրղզստանի Հանրապետության կողմից՝
/ստորագրություն/

Բելառուսի Հանրապետության կողմից՝
/ստորագրություն/

Ռուսաստանի Դաշնության կողմից՝
/ստորագրություն/

Ղազախստանի Հանրապետության կողմից՝
/ստորագրություն/

Տաջիկստանի Հանրապետության կողմից՝
/ստորագրություն/